# ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱՀԱՐՈՍՅԱԼՈՄ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 97 - 98 (17104) ՇԱԲԱԹ 10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


ԷԿՈՆՈՄԻԿԱ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԵՐԿՐՈՒՄ ԳՐԱՆՑՎԵԼ Է ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԵՎ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ՅՈՒՅԱՆԻՇ»

*Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու գլխավորությամբ անցկացված տնտեսական խորհրդի նիստում քննարկվեցին երկրում առկա տնտեսական դրական միտումները եւ ապագա անելիքները:*



Մասնավորապես, քննարկվեց առողջարանային նոր գոտիների զարգացման ծրագիրը, որի ուղղությամբ, վարչապետի հանձնարարությամբ, ակտիվ աշխատում է էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարությունը: Նշվեց, որ, երկրի տնտեսական առաջընթացի եւ խթանման համար, կարեւոր է միջազգային այցելուների թվի աճը, եւ այդ նպատակով առանձնահատուկ առողջարանների, այդ թվում՝ բալնեոլոգիական առողջարանների զարգացումն ու կատարելագործումը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

## ԼԵՀԱՍՏԱՆԸ ԼԻՈՎԻՆ ԱՋԱԿՑՈՒՄ Է ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԱՆԿՈՒԹՅԱՆԸ ՆԱՏՕ-ԻՆ

*Դեկտեմբերի 5-6-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին աշխատանքային այցով գտնվում էր Լեհաստանում:*

Այցի շրջանակներում՝ Սալոմե Զուրաբիշվիլին հանդիպում ունեցավ Լեհաստանի նախագահ Անջեյ Դուդայի հետ: Վարշավայի նախագահական պալատում, նախագահների դեմառդեմ հանդիպմանը հաջորդած մամլո ասուլիսում, Անջեյ Դուդան հայտարարեց, որ Վարշավան լիովին աջակցում է Եվրամիության եւ ՆԱՏՕ-ի անդամ դառնալու Վրաստանի ցանկությանը:

Իր հերթին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ՇԱԼՎԱ ՊԱՊՈՒԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ԱՄԵՆ ԻՆՉ ԱՆՈՒՄ ԵՆՔ 12 ԿԵՏԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ»



*Վրաստանի խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլին, խորհրդարանական պատվիրակության հետ Եվրամիության անդամ երկրներ պաշտոնական շրջայցի շրջանակներում, հայտարարեց, որ այցերի նպատակն է գործընկերների հետ խոսել Եվրամիության կողմից ներկայացված առաջարկությունների մասին եւ ցույց տալ, թե ինչ է անում Վրաստանն այդ կետերը կատարելու համար:*

- Մենք շարունակում ենք մեր այցը Եվրամիության անդամ երկրներ: Իսպանիայից, Պորտուգալիայից, Գերմանիայից հետո այժմ հանդիպումներ կունենանք Հոլանդիայում եւ Լյուքսեմբուրգում:

Այցելությունների հիմնական նպատակն է գոր-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ՀԵՏ



*Վրաստանի պաշտպանության ուժերի հրամանատար, գեներալ-մայոր Գիորգի Մաթիաշվիլին հանդիպում ունեցավ այցով Վրաստանում գտնվող Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ գեներալ-մայոր էդուարդ Ասրյանի հետ:*

Հանդիպմանը Գիորգի Մաթիաշվիլին հյուրին ծանոթացրեց այն բարեփոխումներին, որոնք իրականացվում են Վրաստանի պաշտպանության ուժերում, կողմերն անդրադարձան ռազմական կրթության ոլորտում համագործակցության հեռանկարներին:

Հանդիպման ավարտից հետո, գեներալ-մայոր էդուարդ Ասրյանը ծաղկեպսակ դրեց Վրաստանի տարածքային ամբողջականության համար զոհվածների հուշահամալիրին, հարգանքի տուրք մատուցեց հայրենիքի համար զոհված հերոսների հիշատակին:


Այցի շրջանակներում՝ Հայաստանի զինված ուժերի պատվիրակության անդամները եղան նաեւ ՆԱՏՕ-Վրաստան համատեղ ուսումնա-գնահատման կենտրոն JTEC եւ սերժանտների ակադեմիա:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ը ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՆ Է

## 34 ՏԱՐԻ՝ ԱՎԵՐԻՉ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՀԵՏՈ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏՆ ՈՒ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ, ՍՊԻՏԱԿՈՒՄ ԵՎ ՎԱՆԱՁՈՐՈՒՄ ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՄԱՏՈՒՑԵՑԻՆ ՏԱՐԵՐՔԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

*1988 թվականի դեկտեմբերի 7-ին, ուղիղ 34 տարի առաջ, Հայաստանում գրանցվեց աղետալի երկրաշարժ, որը լուրջ մարտահրավեր դարձավ երկրի համար:*



Դեկտեմբերի 7-ին Հայաստանի փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանը, արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Փամբուխչյանը, տարածքային կառավարման ու ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը Գյումրիում, Սպիտակում եւ Վանաձորում հարգանքի տուրք մատուցեցին տարերքի զոհերի հիշատակին:

Երկրաշարժն ընդգրկեց Հայաստանի տարածքի մոտ 40 տոկոսը: Տուժեց 21 քաղաք եւ շրջան, 342 գյուղ: Անօթեւան մնաց 514 հազար մարդ: Տարբեր աստիճանի վնասվածքներ ստացավ մոտ 20 հազարը, զոհերի թիվը կազմեց 25 հազար: Զոհեր շատ են եղել հատկապես Գյումրիում՝ մոտ 15-17 հազար եւ Սպիտակում՝ 4 հազար մարդ:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

## ԹԲԻԼԻՍԻ. ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԱՆՄԵՂ ՁՈՀԵՐԻ



Դեկտեմբերի 7-ին, Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում, Քվեմո Քարթլիի հոգեւոր հովիվ Տեր Զավեն վարդապետ Յազիչյանի նախագահությամբ, հոգեւորաց ու սարկավագաց դասի մասնակցությամբ, կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ 1988 թվականին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած աղետալի երկրաշարժի զոհերի հիշատակին:

Արարողությանը ներկա էին Վրաստանում Հայաստանի դեսպանության դիվանագետներ, վիրահայ համայնքային կառույցների ներկայացուցիչներ:

Վրաստանում Վիրահայոց թեմի բոլոր եկեղեցիներում այդ օրը երկրաշարժի զոհերի հիշատակին կատարվեց հոգեհանգստյան կարգ:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

## ԿԱՅԱՑԱՎ ՄԻԽԵԻԼ ՍԱՐՋՎԵԼԱՁԵԻ ԵՎ ԱՇՈՏ ՍՄԲԱՏՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

*Վրաստանի խորհրդարանի Մարդու իրավունքների պաշտպանության եւ քաղաքացիական ինտեգրման կոմիտեի նախագահ Միխեիլ Սարջվելաձեն՝ հանդիպում ունեցավ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանի հետ:*



Հանդիպմանը Միխեիլ Սարջվելաձեն եւ Աշոտ Սմբատյանը խոսեցին երկու երկրների միջեւ առկա հարաբերությունների մասին եւ քննարկեցին դրանց խորացման հեռանկարները:

Կողմերն անդրադարձան Վրաստանում ազգային փոքրամասնությունների հարցերի կապակցությամբ պետական քաղաքականությանը եւ այդ ուղղությամբ իրականացվող ընթացիկ ու ծրագրված բարեփոխումներին:

Կողմերը պայմանավորվեցին ուժեղացնել բազմակողմ հարաբերությունները եւ համագործակցության համակարգումը:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

# ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԵՐԿՐՈՒՄ ԳՐԱՆՑՎԵԼ Է ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԵՎ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նոր զբոսաշրջային վայրերի ենթակառուցվածքների զարգացման համար բյուջեից կհատկացվի 200 մլն լարի:

Նշվեց, որ կառավարությունն աշխատում է 10 նոր առողջարանային քաղաքների եւ ավանների ամբողջական վերականգնման եւ վերակառուցման ուղղությամբ: Ծրագրերը կիրականացվեն մի քանի ուղղություններով եւ կներառեն ինչպես զբոսաշրջային գրավիչ վայրերի զարգացում, այնպես էլ՝ բիզնեսի համար ներդրումային առաջարկների ստեղծում՝ դրանով իսկ ստեղծելով լրացուցիչ աշխատատեղեր:

Ինչպես նշեց վարչապետը, հունվար-հոկտեմբեր ամիսներին տնտեսական աճի տեմպերը աճել են 10 տոկոսով, երրորդ եռամսյակում բիզնես ոլորտի շրջանառությունն աճել է 17 տոկոսով եւ կազմել 47 մլրդ լարի, բիզնես ոլորտում երրորդ եռամսյակում աշխատատեղերն ավելացել են 45 հազարով եւ կազմել 723 հազար, ինչը ռեկորդային ցուցանիշ է:

- Այսպիսով երկրում գրանցվել է տնտեսական աճի եւ նոր աշխատատեղերի ռեկորդային ցուցանիշ: Սա մեր ճիշտ քաղաքականության արդյունքն է: Ես ուզում եմ եւս մեկ անգամ անդրադառնալ բիզնեսին: Բիզնեսն ամենից լավ գիտի այն, որ եթե երկրում չկա կայունություն եւ խաղաղություն, ապա՝ բիզնեսի շրջանառության աճ, զբաղվածություն եւ նոր աշխատատեղերի ստեղծում չի գրանցվի,- ասաց վարչապետը:



ԹՈՒՐՔԻԱ

## ՆԱՎԹԱՏԱՐՆԵՐԻ ԽՑԱՆՈՒՄ՝ ԲՈՍՖՈՐԻ ԵՎ ԴԱՐԴԱՆԵԼԻ ՆԵՂՈՒՑՆԵՐՈՒՄ

*Թուրքիայի ափերին նավթատար լցանավերի խցանում է առաջացել նրանից հետո, երբ դեկտեմբերի 5-ին ուժի մեջ են մտել ռուսական նավթի գնի վերին շեմի հետ կապված G-7-ի եւ ԵՄ երկրների սահմանափակումները: Անկարան ստուգում է բոլոր նավերի լիարժեք ապահովագրության մասին նոր փաստաթղթերը:*

*Երկուշաբթի օրը, թուրքական ջրերը հատելու համար, 19 լցանավի կուտակում է առաջացել: Նավերը խարիսխ են գցել Բոսֆորի եւ Դարդանելի նեղուցների մոտ, որոնք ռուսական սեւծովյան նավահանգիստները կապում են միջազգային շուկայի հետ:*

*Հիշեցնենք՝ դեկտեմբերի 5-ից ուժի մեջ է մտել ծովով տեղափոխվող ռուսական նավթի գնի՝ 60 դոլար կամ դրանից պակաս, վերին շեմի հետ կապված Մեծ յոթնյակի երկրների, Ավստրալիայի եւ Եվրամիության 27 պետությունների սահմանափակումը:*

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

# ՇԱԼՎԱ ՊԱՊՈՒԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ԱՄԵՆ ԻՆՉ ԱՆՈՒՄ ԵՆՔ 12 ԿԵՏԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ծընկերների հետ խոսել Եվրամիությունում Վրաստանի առաջընթացի մասին, բացատրել, թե ինչ ենք անում 12 հանձնարարականները կատարելու համար: Նաեւ բացատրել, որ մեզ համար հիասթափություն էր, երբ հունիսին մեզ կարգավիճակ չշնորհեցին: Բոլորն արդեն համաձայն են, որ դա վավեր որոշում չէր, երբ Վրաստանին այլ կերպ էին վերաբերվում, քան Ուկրաինային ու Մոլդովային: Նաեւ գործընկերներից աջակցող խոսքեր ենք լսում:

Ամենակարեւորն այն է, որ մենք, Վրաստանի խորհրդարանը եւ կառավարությունն ամեն ինչ անում ենք 12 կետերը կատարելու համար: Արդեն գիտեք, որ մի քանի օրենքներ ընդունվել են: Մինչեւ տարեվերջ կունենանք նորություններ մի քանի կետերի վերաբերյալ եւս, որոնք կենթարկվեն համապատասխան փոփոխության: Հաջորդ քայլը ԵՄ-ն է լինելու՝ արդար գնահատական տալու եւ համապատասխան որոշում կայացնելու հարցում,- ասաց Շալվա Պապուաշվիլին:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

# ՉԳՈՒՇԱՅԵՔ, ԵՐԿՐՈՒՄ ՄՈՒԵԳՆՈՒՄ Է ՀՈՆԿՈՆԳՅԱՆ ԳՐԻՊԸ

***Երկրում հոնկոնգյան վիրուսի տարածման կապակցությամբ՝ բուժհաստատություններում նկատվում է մահճակալների պակաս: Վարակիչ մյուս հիվանդությունների համեմատ՝ այս վիրուսով հիվանդությունն ընթանում է շատ ավելի ծանր ու տեւական: Այն արտահայտվում է մկանային ցավերով, բարձր ջերմությամբ եւ հարբուխով: Վիրուսը հատկապես վտանգավոր է մինչեւ երկու տարեկան երեխաների շրջանում:***

Ինչպես հայտարարեց առողջապահության փոխնախարար Թամար Գաբունիան՝ մանկական բուժհաստատություններ դիմողները շատ են, թեեւ իրավիճակը կառավարելի է եւ խուճապի պատճառ չկա:

- Նախորդ սեզոնի համեմատ, կլինիկաներն այսօր գերծանրաբեռնված են, թեեւ խուճապի պատճառ չկա: Բոլոր հիվանդներն ստանում են համապատասխան օգնություն: Բանն այն է, որ, վերջին երեք տարիների ընթացքում, կովիդի իրականացված միջոցներն այնքան են նվազեցրել սեզոնային վիրուսների տարածումը, որ ներկայումս ստեղծվել է ոչ սովորական իրավիճակ: Թեպետ սեզոնային գրիպն ընթանում է ինչպես նախորդ տասնամյակներում: Հիմնականում տարածում են գտել գրիպի երկու ենթատեսակները, դրանք են H3N2՝ հոնկոնգյան գրիպը, H1N1-ը, որը, 2009 թվականի համավարակից հետո, հայտնի է «խոզի գրիպ» անվամբ: Դրանք վեր են ածվել սեզոնային գրիպի եւ կազմում են վիրուսով վարակվածների ընդհանուր թվի 20 տոկոսը,- հայտարարեց Թամար Գաբունիան՝ հավելելով, որ ինչ վերաբերում է կորոնավիրուսին, ապա այն վեր է ածվել շարքային գրիպի:

- Հարկ է նշել, որ համավարակը դեռեւս չի ավարտվել, երկրում ամեն օր վավերացվում է 100-ից մինչեւ 600 վարակման դեպք: Լինում են նաեւ մահվան դեպքեր,- նշեց փոխնախարարը եւ հավելեց, որ, հիվանդությունից պաշտպանվելու համար, հաջորդ տարվա հունվարից կսկսվի «Pfizer» եւ «Moderna» պատվաստանյութերի ներկրումը, որոնք կապահովեն պաշտպանություն ինչպես հին շտամերից, այնպես էլ՝ «Օմիկրոնից»:



***Նշենք, որ COVID-19-ով վարակվելու դեպքերի թիվն աշխարհում, դեկտեմբերի 7-ի դրությամբ, կազմել է 650 միլիոն 974 հազար 122: Վիրուսի տարածման սկզբից ի վեր՝ COVID-19-ից մահացածների թիվը հասել է 6 միլիոն 649 հազար 964-ի: COVID-19-ով վարակվելու ավելի քան 20 միլիոն դեպք գրանցած երկրներից են ԱՄՆ-ը, Հնդկաստանը եւ Ֆրանսիան:***

***Ամբողջ աշխարհում COVID-19-ից դեկտեմբերի 7-ի դրությամբ՝ առողջացել է 627 միլիոն 677 հազար 652 մարդ:***

***ՍԻՄՈՆ ԿԻԼԱՉԵ***

ԱՄՆ

## ՍԵՆԱՏՈՒՄ ԳԵՐԱԿՇՌՈՒՄ ԵՆ ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԸ

*ԱՄՆ-ում նոյեմբերին տեղի ունեցած միջանկյալ ընտրությունները պաշտոնապես ավարտված են: Ջորջիա նահանգում Դեմոկրատական կուսակցությունը ներկայացնող Ռաֆայել Ուորնոքն ընտրությունների երկրորդ փուլում առաջ է անցել իր հանրապետական մրցակից Հերշել Ուոքերից, ինչի շնորհիվ դեմոկրատները Սենատում կունենան 51 տեղ, իսկ հանրապետականները՝ 49:*

*Չնայած ընտրությունների արդյունքներով արձանագրված չնչին տարբերությանը՝, դեմոկրատներն այժմ մեծամասնություն կկազմեն սենատի բոլոր հանձնաժողովներում, ինչը նրանց հնարավորություն կտա ավելի արագ մշակել օրենքներ, ավելի հեշտությամբ հաստատել ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի առաջադրած թեկնածուներին, ունենալ ավելի մեծ աշխատակազմ եւ մեծ բյուջե:*

ՌՈՒՄ - ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ. 289-ՐԴ ՕՐ

## ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ԶՈՀՎԵԼ Է 33-ՐԴ ՎՐԱՑԻ ՄԱՐՏԻԿԸ

*Անցյալ շաբաթ Ուկրաինայում զոհվել է Ռուսաստանի դեմ մարտնչող միանգամից վեց վրացի մարտիկ:*

*Նշենք, որ, Ուկրաինայում փետրվարի 24-ին պատերազմի սկսվելուց հետո, արդեն զոհվել է 33 Վրաստանի քաղաքացի:*

## ԿԱՅԱՑԱՎ ԳԵՐԻՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

*Ուկրաինայի եւ Ռուսաստանի միջեւ տեղի է ունեցել գերիների հերթական փոխանակում: Ուկրաինայի նախագահի աշխատակազմի ղեկավար Անդրեյ Երմակի խոսքով՝ ռուսական գերությունից Ուկրաինա է վերադառնում 60 զինծառայող, որոնց թվում են Մարիուպոլի եւ «Ազովստալի» պաշտպանները:*

*Գերությունից ազատվել են Մարիուպոլի 34 պաշտպաններ, որոնցից 14-ը «Ազովստալի» պաշտպաններն են: Ազատ արձակվածների թվում կան նաեւ զինվորականներ, որոնք գտնվել են Ռուսաստանի կողմից վերահսկվող Ելենովկա բնակավայրում:*

*Մյուս կողմից՝ Ռուսաստանի պաշտպանության նախարարությունը հաղորդում է Ուկրաինական գերությունից 60 ռուս զինծառայողի վերադարձի մասին:*

## ՀԱՐՎԱԾՆԵՐ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ

*Ուկրաինական անօդաչու թռչող սարքերը հարվածել են Ռուսաստանի Կուրսկի մարզի էներգետիկ օբյեկտը: Կուրսկի օդանավակայանի տարածքում նավթաբաք է այրվել, խոշոր հրդեհ է բռնկվել: Տուժածներ չկան:*

*Ռուսաստանի Պաշտպանության նախարարությունը հայտարարել էր, որ Ուկրաինան ռեակտիվ ԱԹՍ-ներով փորձել է հարված հասցնել Ռյազանի մարզի «Դյագիլեւո» եւ Սարատովի մարզի «Էնգելս» օդանավակայաններին:*

*Պատերազմի ուսումնասիրության ամերիկյան ինստիտուտն իր հերթական վերլուծության մեջ նշել է, որ ուկրաինական հարվածները ռուսական ռազմավարական օբյեկտներին ցույց են տալիս, որ Ուկրաինայի զինուժը կարող է հարվածել ռուսական զորքերի թիկունքին՝ ուկրաինական դիրքերից 700 կմ հեռավորության վրա:*

## ԱՆՆԱԽԱԴԵՊ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

*Ընթացիկ տարվա փետրվարին սկիզբ առած ռուս-ուկրաինական պատերազմում կողմերից յուրաքանչյուրը կրել է վիթխարի կորուստներ: Ուկրաինական գլխավոր շտաբի տեղեկությամբ՝ ռուսական զինված ուժերը ռազմական գործողությունների ընթացքում կորցրել են 2924 տանկ, 281 ինքնաթիռ, 264 ուղղաթիռ, 531 թեւավոր հրթիռ, 16 նավ, զոհվել է 91690 զինծառայող:*

*Ինչ վերաբերում է ուկրաինական կողմի կորուստներին, ապա, ուկրաինական գլխավոր շտաբի տեղեկատվությամբ, զոհվել է 15000 զինծառայող, 40000 խաղաղ բնակիչ, 8 միլիոն Ուկրաինայի քաղաքացիներ լքել են երկիրը:*

*ԱՄՆ պաշտպանության տեղեկությամբ՝ ռուսական կողմը կորցրել է 94300 զինծառայող, իսկ ուկրաինականը՝ 16000:*

## ԸՍՏ «Time»-Ի՝ ՎԼԱԴԻՄԻՐ ԶԵԼԵՆՍԿԻՆ-ՏԱՐՎԱ ՄԱՐԴ

*Ամերիկյան «Time» հրատարակությունը Տարվա մարդ է ճանաչել Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկուն:*

*«Վլադիմիր Զելենսկին եւ «Ուկրաինայի ոգին» ճանաչվել են «Time»-ի կողմից Տարվա մարդ՝ ապացուցելու համար, որ խիզախությունն ինչպես վախը, կարող է վարակիչ լինել: Ազգերին ու պետություններին միավորելու համար՝ պաշտպանելու Ուկրաինայի ազատությունը, աշխարհին հիշեցնելու ժողովրդավարության եւ խաղաղության փխրունությունը»,- կարդում ենք պարզաբանման մեջ:*

## ՌՈՒՍԱԿԱՆ ՕԿՈՒՊԱՑԻԱՅԻՑ ԱԶԱՏԱԳՐՎԵԼ Է 1888 ՔԱՂԱՔ ԵՎ ԳՅՈՒՂ

*Ըստ Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկու՝ Ուկրաինայի զինված ուժերը ռուսական օկուպացիայից ազատագրել են 1888 քաղաք եւ գյուղ եւ մոտավորապես նույնքան բնակավայր է մնացել ազատագրման համար:*

***Ըստ լրատվական գործակալությունների***

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

# ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻՆ ԻԼԻԱ ԵՐԿՐՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՀՈՐԴԱՆԱՆ ԳԵՏԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՎՐԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՆԱԽԱԳԻԾԸ



*Դեկտեմբերի 6-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպեց Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի հետ:*

Ֆեյսբուքյան իր էջում վարչապետը նշել է, որ պատրիարքին է ներկայացրել Հորդանան գետին առնչվող վրացական մշակութային կենտրոնի նախագծի նախնական տարբերակը, եւ քննարկել այն Կաթողիկոսի հետ:

«Նորին Սրբությունը կիսվեց ինձ հետ իր մտքերով, եւ մենք միասին քննարկեցինք նախագիծը: Փրկչի մկրտության վայրի՝ Հորդանան գետի մոտ, վրացական սավանայի կառուցման նախագիծն ակտիվորեն ընթանում է: Շուտով կսկսենք նախագծային համաձայնագրի համապատասխան ընթացակարգերը, իսկ ավելի ուշ, շինարարության թույլտվությունը ստանալուն պես, շինարարությունը»,- գրել է վարչապետը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

# ԼԵՉԱՍՏԱՆԸ ԼԻՈՎԻՆ ԱՋԱԿՑՈՒՄ Է ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԱՆԿՈՒԹՅԱՆԸ ՆԱՏՕ-ԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նշեց, որ Լեհաստանը, որպես գործընկեր երկիր, մշտապես եւ պատմականորեն աջակցել է Վրաստանին՝ եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման գործընթացում, որն այսօր շատ արդիական է Վրաստանի համար:

Այցի շրջանակներում՝ Վրաստանի նախագահը մասնակցեց Օսվենցիմ քաղաքի Սբ. Գրիգոլ Փերաձեի նահատակության 80-րդ տարելիցին նվիրված միջոցառմանը, որի ընթացքում անցկացվեց Վրաստանի եւ Լեհաստանի փոստային բաժանմունքների «Սբ. Քահանա-նահատակ Գրիգոլ Փերաձե» համատեղ նամականիշի շնորհանդեսը եւ ստորագրման արարողությունը:



Վրաստանի նախագահը Կրակովում ծաղկեպսակ դրեց նախագահ Լեհ Կաչինսկու եւ նրա կնոջ գերեզմանին՝ հարգանքի տուրք մատուցեց վերջիններիս հիշատակին:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ



## ԼԱՇԱ ԽՈՒՑԻՇՎԻԼԻ. «ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈՔՐ ԲԻԶՆԵՍԻ ԽԹԱՆՈՒՄԸ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԻ»

*Վրաստանի ֆինանսների նախարար Լաշա Խուցիշվիլին խոսել է երկրի կառավարության առաձին արտոնությունների մասին, որոնք ուղղված են տեղական արտադրության եւ փոքր բիզնեսի խթանմանը, ինչը, նախարարի խոսքով, կշարունակվի մինչեւ 2026 թվականը:*

- Երեք տարի ժամկետով՝ մինչեւ 2026 թվականի հունվարի 1-ը, կերկարաձգվեն գյուղատնտեսության եւ գյուղատնտեսական կոոպերատիվներում աշխատող անձանց հարկային արտոնությունները: Տեղական արտադրության եւ փոքր բիզնեսի խթանմանն ուղղված առանձին արտոնությունը կշարունակվի մինչեւ 2026 թվականը, այդ թվում՝ կերկարաձգվի շուկայում առեւտրով զբաղվող ֆիզիկական անձանց համար հարկային դասական մոդելների (ՀԴՄ) օգտագործման պարտավորությունը,- ասաց Լաշա Խուցիշվիլին՝ հավելելով, որ փոփոխություններ են նախապատրաստվել նաեւ հարկաբյուջետային մասով եւ հարկային քաղաքականության մասով, որը վերաբերում է ֆինանսական հատվածին:

- Ապահովագրական ոլորտը կառանձնացվի ֆինանսական հատվածից եւ մեկ տարով կհետաձգվի էստոնական շահութահարկի մոդելին անցումը: Ինչ վերաբերում է մնացած ֆինանսական հատվածին (բանկային հաստատություն, վարկային միություն, միկրոֆինանսական կազմակերպություն եւ վարկատու սուբյեկտ), ապա նրանց համար կպահպանվի, այսպես կոչված, շահութահարկի դասական մոդելը: Բացի այդ, կչեղարկվի նրանց կողմից թողարկված շահաբաժինների 5 տոկոս հարկը, իսկ հարկվող շահույթը, 15 տոկոսի փոխարեն, կհարկվի 20 տոկոսով,- նշեց Լաշա Խուցիշվիլին:

## ՌԱՏԻ ԲՐԵԳԱԶԵ. «ՔՐԵԱԿԱՆԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿԻ ԺԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԼԻՆԵՆ ԱՆՎՃԱՐ»



*Վրաստանի Արդարադատության նախարար Ռատի Բրեգաձեի խոսքով՝ բանտարկյալների համար երկարաժամկետ ժամադրություններն անվճար կլինեն եւ նշված փոփոխությունն արտացոլվելու է Քրեական նոր օրենսգրքում:*

- Արդարադատության նախարարությունը, համապատասխան գերատեսչությունների ներգրավմամբ, պատրաստել է Քրեական նոր օրենսգրքի նախագիծը, որը քննարկվելու է խորհրդարանում: Մեղադրյալին կտրվի երկարաժամկետ ժամադրության իրավունք, որը նա նախկինում չուներ: Բացի այդ, բոլոր տիպի ժամադրությունները կդառնան լիովին անվճար: Այսօր, օրինակ, մեծահասակները պետք է վճարեն 60, իսկ անչափահասները՝ 30 լարի: Ուստի, սա մեծ օգուտ կլինի բանտարկյալների եւ նրանց ընտանիքի անդամների համար,- ասաց Ռատի Բրեգաձեն:

### ԴՊՐՈՑՆԵՐԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԸ՝ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՑ

*Վրաստանի հանրակրթական դպրոցներում 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակը կավարտվի դեկտեմբերի 29-ին:*

*Հետեւաբար, հանրակրթական դպրոցներում ձմեռային արձակուրդը կսկսվի դեկտեմբերի 30-ին եւ կտեւի երկու շաբաթ:*

*Ուսումնական հաստատություններում դասերը կվերսկսվեն 2023 թվականի հունվարի 16-ից:*

*Նշենք, որ Վրաստանի հանրակրթական դպրոցներում 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակը մեկնարկել է սեպտեմբերի 15-ին:*

### ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԿԻՆ ԲԱՐԴԱՑՎՈՒՄ Է

*Վրաստանի ներքին գործերի նախարարի հրամանով, 2023 թվականի սեպտեմբերի 1-ից վարորդական վկայական ստանալ ցանկացողները պետք է կարողանան ստուգել իրենց մեքենաների տեխնիկական վիճակը երթեւեկությունից առաջ:*

*Քննության երկրորդ փուլը (երթեւեկություն քաղաքում) հանձնած քաղաքացին պետք է պատասխանի ավտոմեքենայի տեխնիկական վիճակի մասին հարցերին կամ գործիքների եւ սարքերի գործնական օգտագործմամբ, բանավոր ցուցադրի իր իմացությունը:*

### ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆ ԱՎԵԼԱՑԵԼ Է

*Ըստ Վրաստանի արդարադատության նախարարի՝ ընթացիկ տարվա հունվարի 1-ից մինչեւ հոկտեմբերի 25-ը Վրաստանի քաղաքացիության հայտ է ներկայացրել 16 852 մարդ:*

*Ընդ որում, 2022 թվականին գերատեսչությանը ներկայացված հայտերի թվում առաջին տեղը զբաղեցնում է քաղաքացիության պահպանման հայտը, երկրորդը՝ բացառիկ կարգով քաղաքացիության ստացման հայտն է, իսկ երրորդը՝ քաղաքացիության ժամանակավոր վերականգնումը:*

*16852 դիմորդներից քաղաքացիության ստացման քննությանը չի ներկայացել 15328-ը:*

*Ինչ վերաբերում է քննությանը ներկայացած 1524 մարդուն, ապա քննությունը հաջող հանձնել է 129-ը, թեպետ միայն 40-ն է ստացել քաղաքացիություն:*

### ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

**(9 դեկտեմբերի)**

*Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը:*

| Տարադրամ | Լարի |
|---|---|
| 1 ԱՄՆ ԴՈԼԱՐ | 2.6848 |
| 1 ԵՎՐՈ | 2.8196 |
| 100 ՌՈՒԲԼԻ | 4.2796 |
| 1000 ԴՐԱՄ | 6.8047 |

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

# «ԺՈՂՈՎՐԴԻ ՈՒԺ»-Ը ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆԸ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ՉԳՈՒՇԱՆԱԼ «ՀԱՎԱՏԱՐԻՄ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՑ»



*«Ժողովրդի ուժ» շարժումը վրաց հասարակայնությանը կոչ է անում զգուշանալ Վրաստանի «հավատարիմ բարեկամների ժողովրդավարության կոչերից, քանի որ դրանք առավելագույնս ուղղված են ժողովրդավարության հիմքերի սասանմանը:*

Ինչպես հայտարարեց «Ժողովրդի ուժ» շարժման ղեկավարներից Սոզար Սուբարին, միայն իր արդարության մեջ համոզված ժողովուրդն է ի վիճակի Վրաստանում կանխելու «ագենտոկրատիայի» վերադարձը իշխանություն, ինչը երկրում խաղաղության ու ժողովրդավարության առաջընթացի պահպանման պարտադիր պայմանն է:

Դեկտեմբերի 6-ին «Ժողովրդի ուժ» շարժման վերոնշյալ հայտարարությունն արվեց՝ ի պատասխան Վրաստանի «հավատարիմ բարեկամների կողմից» տարածած հաղորդագրության, ըստ որի՝ 2012 թվականից վրացական ժողովրդավարությունը հետընթաց է ապրում եւ ընդդիմությանը կոչ է անում համատեղ ջանքերով իշխանության ղեկից հեռացնել «Վրացական երազանքին»:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

# ԾԱՆՈԹԱԾԱՆ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԵՎ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՆԵՐՈՒՄ ԸՆԹԱՑԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻՆ

***Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում պետական լիազոր-նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլիին, առաջին փոխնահանգապետ Դավիթ Վարդիաշվիլիին, Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների քաղաքապետեր Մելքոն Մակարյանը եւ Անի Մոսոյանը, երկրամասային վարչության ներկայացուցիչների, ինչպես նաեւ երկու մունիցիպալիտետների քաղաքապետարանների ենթակառույցային ծառայության աշխատակիցների հետ, ծանոթացան ընթացիկ ենթակառույցային նախագծերին:***

Նինոծմինդայում, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախաձեռնությամբ, «Նորացված տարածաշրջաններ» ծրագրի շրջանակներում, ավարտվեց «Հայոս-Քարթլոս» զբոսայգու վերանորոգումը, ընթացքի մեջ է այդ ծրագրով քաղաքի Ազատության փողոցի վրա գտնվող զբոսայգու բարեկարգումը: Նինոծմինդայում ակտիվ ընթանում են, Վրաստանի տարածաշրջաններում իրականացվող նախագծերի հիմնադրամից ֆինանսավորվող, առանձին փողոցների վերանորոգումը, ավարտվել է նույն հիմնադրամից ֆինանսավորված Մեծ եւ Փոքր Արագյալ գյուղեր տանող ճանապարհը: Փոքր Խանչալիում ավարտվեց արդի չափորոշիչներին համապատասխանող մանկապարտեզի շինարարությունը, որն անցկացվեց տեղական բյուջեի ֆինանսավորմամբ:





Ախալքալաքիի մունիցիպալիտետում ավարտվեցին 2022 թվականի համար ծրագրված ենթակառույցային նախագծերը, մոտ օրերս կավարտվի լեռան հիմնադրամից ֆինանսավորված Մուրջախեթ գյուղի կամրջի շինարարությունը: Ակտիվ առաջ են տարվում, Վրաստանի տարածաշրջաններում իրականացվող նախագծերի հիմնադրամի կողմից ֆինանսավորված, Քարցեփ եւ Ափնի գյուղեր տանող ճանապարհների վերանորոգումը:

«Նորացված տարածաշրջաններ» ծրագրի շրջանակներում՝ աշխատանքներ են տարվում Ախալքալաքիի փողոցների վերանորոգման ուղղությամբ:

Երկրամասային վարչության ղեկավարները, ենթակառույցային նախագծերին ծանոթանալուց հետո, հանդիպել են Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների քաղաքապետարանների ենթակառույցների եւ տարածքի կարգավորման ծառայությունների աշխատակիցների հետ, հանրագումարել 2022 թվականին իրականացված եւ 2023 թվականի համար ծրագրված ենթակառույցային նախագծերը:

# ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

***Ախալքալաքիի մունիցիպալիտետի քաղաքապետ Մելքոն Մակարյանը հանդիպեց ինքնակառավարման մարմինների եւ Ախալքալաքիի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող ծառայությունների ղեկավարների հետ:***



Հանդիպմանը քննարկվեցին տարվա ընթացքում իրականացված եւ ընթացիկ ծրագրերը, անդրադարձ կատարվեց նաեւ հաջորդ տարվա համար նախատեսված եւ իրականացվող հրատապ հարցերին եւ 2023 թվականի Ամանորյա միջոցառումներին առնչվող կազմակերպչական հարցերին:

Նշվեց, որ Ամանորյա մրցույթն ավարտվել է եւ նախապատրաստական աշխատանքներ են սկսվում:

Դեկտեմբերի 26-ին կանցկացվի Նոր տարվան նվիրված միջոցառումը, որը կավարտվի գալա համերգով:

Հանդիպմանը մասնակցեց Վրաստանի խորհրդարանում Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների պատգամավոր Սամվել Մանուկյանը:

Նշվեց, որ հնչած առաջարկներն ու նախաձեռնությունները հնարավորինս հաշվի կառնվեն ինչպես նախամանորյա ծրագրերի գործողությունների ծրագրում, այնպես էլ՝ քաղաքապետարանի հետագա օրակարգում:

# ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ



***Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանը հանրությանը ներկայացրեց քաղաքապետարանի գործունեության 2022 թվականի հաշվետվությունը: Ստորեւ որոշ կրճատումներով այն ներկայացնում ենք ընթերցողներին:***

## ՖԻՆԱՆՍԱ-ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ըստ քաղաքապետարանի հաշվետության, մունիցիպալիտետի բյուջեի եկամտային մասը տարվա ընթացքում կատարվել է, ընդ որում, գույքահարկը գերակատարվել է՝ կազմելով 102 տոկոս:

Լրիվությամբ կատարվել են նաեւ պետական բյուջեից ստացվելիք գումարի եւ բյուջեի ծախսերի պլանները:

Հաշվետու ժամանակահատվածում մունիցիպալիտետի սակրեբուլոյի ֆինանսավորումը կազմել է 732,7 հազար լարի, քաղաքապետարանինը՝ 2117,8 հազար լարի: Գյուղական ծրագրով նախատեսված նախագծերի համար ծախսվել է 436 հազար լարի:

Նշենք, որ մունիցիպալիտետում, 2022 թվականին ոչ հարկային եկամուտների պլանը կատարվել է 232,6 տոկոսով, պլանով նախատեսված 398,4 հազարի փոխարեն՝ 926,7 հազար լարի (գերազանցվել է 528,3 հազար լարիով), ոչ ֆինանսական ակտիվների նվազեցումից առաջացած եկամուտներինը՝ 127 տոկոսով, պլանով նախատեսված 112,3 հազարի փոխարեն՝ 142,6 հազար լարի (գերազանցվել է 30,3 հազար լարիով):

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի սոցիալական ծառայության 2022 թվականի հաշվետվության մեջ ներկայացված է մունիցիպալիտետի սոցիալական պատկերը, ըստ որի՝ տրամադրվել է ֆինանսական օգնություն բնակչության ստացիոնար բուժման համար (վիրահատություն, ինչպես նաեւ ուռուցքադիալեզային հիվանդների բուժում), ինչի համար նախատեսված էր 222, 137 լարի: Այս ծրագրի շրջանակներում՝ օգնություն է ստացել 441 շահառու: Տրամադրվել է միանվագ սոցիալական օգնություն՝ խնամակալը կորցրած եւ բազմանդամ ընտանիքներին ու խնամակալը կորցրած ուսանողներին (39 590 լարի, 96 շահառու, այդ թվում՝ 27 ուսանող եւ 69 խնամակալը կորցրած ընտանիք): Տրամադրվել է սոցիալական օգնություն սահմանափակ հնարավորությունների տեր անձանց (31, 200 լարի, 286 շահառու): Սոցիալական օգնություն՝ նորածին երեխաներ ունեցող ընտանիքներին (64, 500 լարի, 215 շահառու): Սոցիալական օգնություն՝ բազմազավակ ընտանիքներին (9, 800 լարի, 30 շահառու): Կարիքավոր ընտանիքներին տրամադրվել է միանվագ օգնություն վառելանյութ ձեռք բերելու համար (23,950 լարի, շահառու): Միանվագ օգնություն է տրամադրվել կարիքավոր ընտանիքներին եւ անօթեւան ընտանիքներին (70, 450 լարի, 468 շահառու): Ֆինանսական օգնություն՝ համաշխարհային պատերազմի վետերաններին (8,100 լարի, 54 շահառու):

Ըստ հաշվետվության՝ սոցիալական օգնության եւ առողջապահության ոլորտի ֆինանսավորման համար ծախսվել է 616,6 հազար լարի: Այդ գումարից Հասարակական առողջապահական կենտրոնը ֆինանսավորվել է 108,1 հազար լարիով, COVID- 19 համար հատկացվել է 2,0 հազար լարի, մունիցիպալիտետի սոցիալապես անապահով խավին սոցիալական օգնության համար հատկացվել է 506,6 հազար լարի:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Մունիցիպալիտետի տնտեսական զարգացման եւ գույքի կառավարման ծառայության հաշվետվության մեջ, մասնավորապես, նշված է, որ հողամասերի 40 աճուրդից անց է կացվել 6-ը եւ ավտոմեքենաների (5 աճուրդից՝ չորսը) աճուրդների հաշվին բյուջե է մուտքագրվել համապատասխան 64675 եւ 23337 լարի:

«Զբաղվածության խթանում» պետական ծրագրի շրջանակներում՝ ծառայության կողմից հայտարարվել է 124 թափուր աշխատատեղի համար մրցույթ, աշխատանքի է ընդունվել 88 օգտատեր:

## ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի առաջնային կառուցվածքային միավորի իրավաբանական ծառայության հաշվետվության մեջ տրված են մանրամասներ դատարանների կողմից կայացած վերջնական որոշման, վարույթում գտնվող գործերի, վարչական իրավախախտումների վերաբերյալ ձեւավորած արձանագրությունների, վերադաս մարմիններում մունիցիպալիտետի շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումների մասին:

## ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի պետական գնումների ծառայության հաշվետվությունից տեղեկանում ենք, որ 2022 թվականին քաղաքապետարանի տարածքում ենթակառուցվածքային, շինարարական եւ այլ աշխատանքներ իրականացնելու համար, պետական գնումների ծառայության կողմից հայտարարվել է 41 մրցույթ: Մասնավորապես, «Աջակցություն գյուղին» ծրագրի շրջանակներում հայտարարվել է 2 մրցույթ, կնքվել է 32 ուղիղ պայմանագիր, դրա հետ մեկտեղ կնքվել է նաեւ 53 այլ նշանակության ուղիղ պայմանագիր, «Տարածաշրջանային զարգացման հիմնադրամի» շրջանակներում հայտարարված 5 մրցույթը կայացել է: Կայացել է նաեւ «Լեռնային» հիմնադրամի շրջանակներում հայտարարված 1 մրցույթ:

## ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ըստ Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կրթության, մշակույթի եւ հուշարձանների պահպանության ծառայության հաշվետվության, 2022 թվականին ծառայությունը 92 հազար լարի գումարով իրականացրել է 11 տարբեր բնույթի միջոցառում: Գումարներ են հատկացվել նաեւ մշակույթի տան պարի համույթների, երգչախմբի գործունեության համար:

Ըստ հաշվետվության՝ Նինոծմինդայի մունիցիպալիտետում գործում է 12 մանկապարտեզ, որտեղ նախադպրոցական կրթություն է ստանում 803 երեխա, աշխատում է 150 մարդ: Այս տարի շահագործման է հանձնվել երկու մանկապարտեզ՝ Ջիգրաշեն եւ Ժդանով գյուղերում (նշված է, որ հաջորդ տարվա հունվարին շահագործման կհանձնվեն եւս 3 մանկապարտեզ՝ Փոքր Խանչալի, Ռոդիոնովկա, Ղուլալիս գյուղերում, որի արդյունքում նախադպրոցական կրթություն կստանա 920 երեխա):

Գյուղերում գործող մանկապարտեզներում լուծվել է սննդի տրամադրման հարցը եւ երեխաներին տրվում է մեկանգամյա սնունդ:

Ինչ վերաբերում է մարզական միջոցառումներին, ապա ըստ հաշվետվության տարվա ընթացքում տարբեր մարզաձեւերով անց է կացվել մունիցիպալիտետի 10 առաջնություն:

***Էջը պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ***